

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ,
ՓԻԼՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ
ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ՀԱՐՅԵՐ



ԱՐԱՐԱՏ ՀԱԿՈՐՅԱՆ

*ՀՊՏՀ փիլիսոփայության և հայոց պատմության
ամբիոնի պրոֆեսոր,
պատմական գիտությունների դոկտոր*

ՌՈՒՋԱՆՆԱ ՂԱԶԱՐՅԱՆ

*ՀՊՏՀ փիլիսոփայության և հայոց պատմության
ամբիոնի ավագ լաբորանտ*

**ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԸ ԵՎ ՍՅՈՒՆԻՔԻ
ԻՆՔՆԻՇԽԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԽՆԴԻՐԸ (1920–1921 թթ.)**

Հայ պատմագիտական և հուշագրական գրականության մեջ տարակարծություններ կան Գարեգին Նժդեհի (Գ. Տեր-Հարությունյան) և նրա հիմնած` Սյունիքի 1920–1921 թթ. ինքնիշխան պետականության հարցում: Խորհրդահայ պատմագիրները հասկանալի պատճառներով, մեղմ ասած, մռայլ գույներով են ներկայացրել Սյունիքի 1919–1921 թթ. հերոսամարտի կազմակերպիչ ու ոգեշնչող Գ. Նժդեհին` նրան որակելով բանդիտ, ավազակ, ելուզակ և այլն, իսկ Սյունիքի կամ Ջանգեզուրի նրա ստեղծած ինքնիշխան պետականությունը` իբրև Ջանգեզուրը բուն Հայաստանից անջատելու և միջազգային իմպերիալիզմին ծառայեցնելու արկածախնդրական փորձ, Ջանգեզուրն իբրև հակահեղափոխության որջ¹:

¹ Տե՛ս **Ա. Հակոբյան**, Քաղաքացիական կռիվները Հայաստանում 1921 թ., Եր., 1948, էջ 55-56, **Գ. Ղարիբջանյան**, Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները սովետական իշխանության համար մղված պայքարում, Եր., 1955, էջ 407, **Ս. Սողոմոնյան**, Քաղաքացիական կռիվները Ջանգեզուրում 1920-1921 թթ., Եր., 1958, **Ա. Վարդապետյան**, Հայաստանի կարմիր բա-

Դրա փոխարեն հետխորհրդային ժամանակակից հեղինակները, ծերբազատվելով խորհրդային-կոմունիստական գաղափարաքաղաքական կապանքներից, իրավացիորեն բարձր են գնահատել այն պայքարը, որ մղվել է այդ երկրամասում, որի նպատակը ռազմավարական նշանակության հայկական այդ հատվածի պաշտպանությունն էր օտար՝ թուրքական, թաթարական, բուլղարական ոտնձգություններից: Չանգեզուրի ինքնիշխան պետականության հիմնումը նպատակ էր հետապնդում պետական կառույց ստեղծելու, ինքնակազմակերպվելու և այդ ձևով ինքնապաշտպանվելու միջոցով սպասելու հարմար պահի ու, համապատասխան երաշխիքներ ստանալուց հետո, երկրամասը միավորելու մայր հայրենիքին՝ Արարատյան Հայաստանին:

Այդ գոյամարտին ու նաև Սյունիք-Լեռնահայաստանի պետականության պատմության հարցերին է նվիրված պրոֆեսոր Արամ Սիմոնյանի հիմնարար աշխատությունը²:

Սյունիքի ինքնիշխան պետականության խնդրին ուղղակի և անուղղակի առնչվում են այլ աշխատություններ³: Ներքոհիշյալ հեղինակներից Ս. Խաչատրյանը և Մ. Զիլֆուղարյանը Լեռնահայաստանը բնորոշել են որպես ժամանակի հրամայականով և պատմական անցքերի բերումով ստեղծված «ինքնավար հայկական պետություն»⁴:

Թեմայի վերաբերյալ ուշագրավ անդրադարձներ կան նաև Սփյուռքի հեղինակների ուսումնասիրություններում⁵: Նշվածներից առանձնանում է Վարդան Գևորգյանի աշխատությունը, որը գրված է Գ. Նժդեհի անձնական արխիվի նյութերի հիման վրա: Սույն արժեքավոր աշխատանքը հետազայում մի քանի անգամ հրատարակվեց Երևանում: Այդ իմաստով անփոխարինելի սկզբնաղբյուրի նշանակություն ունեն Գ. Նժդեհի՝ տարբեր պարբերականներում լույս տեսած փաստաթղթերը, հրամանները, ճառերը, նամակները և այլն, որոնք խնամքով ի մի են բերված և ՀՀ Կառավարության որոշմամբ հրատարակված են նրա երկերի երկհատորյակում⁶:

Սփյուռքի հեղինակները հիմնականում բարձր են գնահատել Չանգեզուրի ազատագրական պայքարը: Սակայն Լեռնահայաստանի անկախության խնդրում գոյություն ունի որոշ տարակարծություն: Ս. Վրացյանը, ըստ արժանվույն գնահատելով Չանգեզուրի անկախությունը, կարծիք է հայտնում, որ, օրինակ՝ Դրոն վնասակար է համարել Չանգեզուրի անկախ գոյությունը և այլն⁷:

նակը քաղաքացիական կռիվներում 1920-1921 թթ., Եր., 1960, էջ 98, Հայաստանի կոմկուսի պատմության ուրվագծեր, Եր., 1967, էջ 322, **Խ. Բարսեղյան**, Մարքսիզմի տարածումը Հայաստանում, գ.2, Եր., 1975, էջ 548, **Ս. Ալիխանյան**, Գ. Օրջոնիկիձեն և սովետական իշխանության հաստատումը Հայաստանում, Եր., 1974, էջ 191:

² Տե՛ս **Ա. Սիմոնյան**, Չանգեզուրի գոյամարտը (1920-1921 թթ.), Եր., 2000:

³ Տե՛ս **Մ. Լալայան**, Գ. Նժդեհի գործունեությունը 1920-1941 թթ. (Գ. Նժդեհ – 115, գիտաժողովի նյութեր), Եր., 2001, **Մ. Լալայան**, Ազգային գաղափարախոսության խնդիրների շուրջ, Եր., 2008, **Ս. Խաչատրյան**, **Մ. Զիլֆուղարյան**, Լեռնահայաստանի հայկական պետությունը, Եր., 2004, **Ա. Հարությունյան**, Գ. Նժդեհի 1921 թ. Թավրիզի դատավարությունը, Եր., 2004, **Ռ. Համբարձումյան**, Գարեգին Նժդեհ, Ստեփանակերտ, 2008, **Վ. Ղազախեցյան**, Հայաստանը 1920-1940 թթ., Եր., 2006, **Ֆ. Ղազարյան**, Լեռնահայաստանի հերոսամարտը և Գ. Նժդեհը, Եր., 2013 և ուրիշներ:

⁴ Տե՛ս **Ս. Խաչատրյան**, **Մ. Զիլֆուղարյան**, նշվ. աշխ., էջ 6:

⁵ Տե՛ս **Վ. Գևորգյան**, Լեռնահայաստանի հերոսամարտը (1919 -1921), Պուրթշ, 1923, **Հ. Քաջազունի**, Ղաշնակցութիւնը անելիք չունի այլևս, Պուրթշ, 1923, Յապօնի յուշերը (գրի առավ՝ Յակ Տէրունի), «Հայրենիք», 1941, թիվ 9 (հուլիս): **Ս. Վրացեան**, Կեանքի ուղիներով, հ. 2, Պէյրուս 1967, նույնի՝ Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993:

⁶ Տե՛ս **Գ. Նժդեհ**, Երկեր, հ.1, հ. 2, Եր., 2002:

⁷ Տե՛ս **Ս. Վրացյան**, Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, էջ 595:

Նկատի առնելով վերոշարադրյալը՝ սույնով փորձ է արվում պատմագիտական տեսանկյունից անդրադառնալու Սյունիքի պետականության խնդրին և նոր փաստարկներով, եզրահանգումներով ու գնահատականներով արժևորելու այն:

1920 թ. դեկտեմբերի 25-ին Տաթևի վանքում հրավիրված համազանգեզուրյան 1-ին համագումարը (69 գյուղի 118 պատգամավորներով), քննելով Հայաստանում և տարածաշրջանում ստեղծված իրավիճակը, «< խորհրդայնացումը, նկատի առնելով Ջանգեզուրում բոլշևիկյան 5-ամսյա աղետալի հետևանքները և երկրամասի 3 տարի շարունակ (սկսած 1917 թ.) փաստորեն ներքին ինքնուրույն կյանքով ապրելու հանգամանքն ու ձգտումը, որոշեց «Ջանգեզուրը հայտարարել ժամանակավորապես ինքնավար, *մտցնելով հանրապետական իրավակարգ* (ընդգծումը մերն է – հեղ.), լինելով անկախ մինչև քաղաքական հնարավորություն կունենա միանալու իր մայր երկրի՝ Հայաստանի հետ»⁸:

Անշուշտ, իրավացի են այն պատմաբանները, ովքեր կարծում են, թե Ինքնավար Սյունիքի հռչակումը միանգամայն հիմնավոր էր ու արդարացված: Բանն այն է, որ երկրամասը թուրքական ասկյարների (զորքերի) կողմից զավթելու անմիջական վտանգ կար, որոնք գտնվում էին Ալեքսանդրապոլում, Շարուրում և Նախիջևանում, ինչպես նաև բոլշևիկ դարձած թաթար «կարմիր» զինուժի կողմից, որ, Լեռնային Ղարաբաղը գրավելուց հետո, խորհրդայնացման անվան տակ հերթի էր դրել Ջանգեզուրի գրավումը և Ադրբեջանին կցումը: Հենց իրենք՝ տաճիկ և թաթար պանիսլամիստներն էին հայտարարում. «Մենք եկել ենք Ջանգեզուրն ու Ղարաբաղը կցելու խորհրդային Ադրբեջանին»⁹: Ստեղծված պայմաններում ազատ Սյունիքը պետք է դառնար քաղաքական գործոն ու ազդակ՝ ապահովելու լեռնահայության ֆիզիկական գոյությունը բոլշևիկապանիսլամական վտանգից:

Ջանգեզուրի ազատագրական պայքարի բնույթի վերաբերյալ սպառնիչ ու բնութագրական պատասխանը տվել է հենց այդ պայքարի անմիջական ղեկավար ու ոգեշնչող Գարեգին Նժդեհն իր «Ինչո՞ւ պայքարեց Լեռնահայաստանը» հոդվածում: Ջանգեզուրի կռիվը ոչ կուսակցական էր, ոչ էլ դասակարգային: Այն ուղղված չէր նաև խորհրդային իրավակարգի դեմ: «Հայկական լեռնաշխարհը Ադրբեջանին կցելու տարիներով կրկնվող փորձերը՝ ահա թե ինչն էր մեր բազուկը զինել և մեզ լեռները հանել (ընդգծումը մերն է – հեղ.)»¹⁰: Ուստի, ըստ Նժդեհի՝ «Ահա թե ինչու պետք եղավ ներքուստ ավելի ևս ամրացնելու նպատակով Ջանգեզուրը, 1920 թ. 25 դեկտեմբերին, Տաթևի առաջին համագումարի միջոցով, հայտարարել Ինքնավար Սյունիք (ընդգծումը Նժդեհինն է – հեղ.)»¹¹:

Մինչ այդ պատմական նշանակության իրադարձության հասնելը, 1920 թ. նոյեմբերին «խուստուայան արժիվները» Մեծն Գ. Նժդեհի գլխավորությամբ Ջանգեզուրը մաքրեցին թուրք-թաթար-բոլշևիկ հրոսակներից և պայմաններ ստեղծեցին երկրամասում պետական կառույց ձևավորելու¹²:

Տեղին է այն դիտարկումը, որ համազանգեզուրյան 1-ին համագումարը, ըստ էության, կատարեց Սահմանադիր ժողովի դեր, մշակեց պետական մի

⁸ Վ. Ղազախեցյան, նշվ. աշխ., Եր., 2006, էջ 158:

⁹ Գ. Նժդեհ, Երկեր, հ. 2, Եր., 2002, էջ 11:

¹⁰ «Հայրենիք», Պոսթըն, 1923, թիվ 8, էջ 78, Գ. Նժդեհ, Երկեր, հ.2, Եր., 2002, էջ 8:

¹¹ Գ. Նժդեհ, Երկեր, հ. 2, Եր., 2002, էջ 115:

¹² Տես Արմուտ գիրք, Գորիս, 1921, էջ 8–10:

քանի հիմնարար սկզբունքներ՝ ժամանակավորապես ինքնավար հայտարարված Ջանգեզուրում հաստատելով հանրապետական իրավակարգ¹³:

Հատկանշականն այն է, որ Տաթևի համագումարը փաստորեն ընդունեց Ինքնավար Սյունիքի Սահմանադրությունը, որը կոչվեց «Կառավարության ձևի գլխավոր գծեր»¹⁴: Ըստ այդ փաստաթղթի՝ բարձրագույն օրենսդիր մարմինը ընտրովի խորհուրդն էր կամ պառլամենտ-խորհրդարանը:

Այսինքն՝ Տաթևի համագումարը ներկայանում էր որպես Ինքնավար Սյունիքի օրենսդիր մարմին՝ օրենքներ, հրամաններ, որոշումներ ընդունելու իրավասություններով: Իսկ գործադիր մարմինը կամ կառավարությունը ընտրվում էր խորհրդարանի կողմից՝ բաղկացած 9 հոգուց, 6 ամիս ժամանակով: Կառավարությունը ղեկավարելու էր ինքնավար երկրամասը՝ վարչաքաղաքական, քաղաքացիական ու զինվորական բոլոր գործերով:

Խորհրդարանը համարվում էր բարձրագույն իշխանության մարմին, որովհետև կառավարությունը ընտրվում և հաշվետու էր խորհրդարանի առջև: Խորհրդարանն էր նշանակում և արձակում զորքերի գլխավոր հրամանատարին (Սպարապետին), պատերազմ հայտարարում, հաշտություն կնքում և այլն: Քանի որ ժամանակաշրջանը պատերազմական էր, ուստի շատ էր կարևորվում Սպարապետի դերը, որի պաշտոնում էլ միաձայն ընտրվեց զանգեզուրյան ազատամարտի ղեկավար ու ոգեշնչող Գարեգին Նժդեհը:

Տաթևի համագումարը ընտրեց 9 հոգուց բաղկացած կառավարություն: Վարչապետ հաստատվեց մասնագիտությամբ ուսուցիչ Գեղեոն Տեր-Մինասյանը: Սակայն երկրի փաստական ղեկավարը Սպարապետ Գ. Նժդեհն էր՝ դիկտատորի իրավունքներով, ում հեղինակությունն անվերապահորեն ընդունում էր ամբողջ ժողովուրդը:

Ըստ Տաթևի համագումարի սահմանած կարգի՝ վարչական տեսակետից ինքնավար Սյունիքը բաժանվում էր 6 շրջանի՝ Բուն Ջանգեզուր, Տաթևի ձոր, Ղափան, Դարաբասի ձոր, Սիսիան և Գենվազ: Շրջաններում գործադիր իշխանությունը իրականացնում էին 3–5 անդամից կազմված գործադիր մարմինը, դարձյալ 6 ամիս ժամկետով: Շրջանի կամ գավառակի ղեկավարը գավառապետն էր, որին ընտրում էր շրջանային գործադիր մարմինը: Գյուղը կամ համայնքն ուներ իր գյուղական կոմիսարը, որն իր հերթին ընտրվում էր գյուղական համայնքի և հաստատվում շրջանային գործադիր մարմնի կողմից: Փաստորեն, քաղաքական, պատերազմական բարդ պայմաններում փորձ է արվել ստեղծելու նաև տեղական ինքնակառավարման մարմիններ, բացի այդ, Ինքնավար Սյունիքն ուներ նաև *պետական վերահսկիչ* մարմին, որը վերահսկում էր կառավարության (դիվանի) և այլ հիմնարկությունների ֆինանսատնտեսական ու այլ բնույթի գործունեություն և հաշվետու էր խորհրդարանի առջև: Ինքնավար Սյունիքի մայրաքաղաք հռչակվեց Գորիսը¹⁵: Արտաքին հարաբերությունների զարգացման տեսակետից որոշվեց մշտական ներկայացուցիչ ունենալ Պարսկաստանում: Հաշվի էր առնվում, որ ստեղծված պայմաններում միակ հուսալի կապը անմիջական հարևան Պարս-

¹³ Տե՛ս Ա. Սիմոնյան, նշվ. աշխ., էջ 373, 375, Ս. Խաչատրյան, Մ. Զիլֆուլադյան, Լեռնահայաստանի հայկական պետությունը (Տաթևի 1-ին և 2-րդ համագանգեզուրյան համագումարները), Եր., 2004, էջ 63:

¹⁴ Վ. Ղազիսեցյան, նշվ. աշխ., էջ 159:

¹⁵ Այդ մասին հանգամանորեն տե՛ս Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն (հավելված), Եր., 1993, էջ 658–667:

կաստանի հետ կարող էր լինել: Ընդունվեցին նաև ներքին կյանքին վերաբերող կարևոր որոշումներ, օրինակ՝ պետականացվեցին խոշոր մասնավոր սեփականությունը, բեգական ու եկեղեցապատկան հողերը և այլն¹⁶: Ինքնավար Սյունիքը հասցրեց ստեղծել նաև իր պետականության տարբերանշանները՝ զինանշան և օրհներգ-քայլերգ: Զինանշանի վրա պատկերված էր եռանկյունի վահան, ուղղահայաց մեխված կարճ սուր՝ գլխին բազմած սլացքի պատրաստ արծիվ: Իսկ հայրենասիրական ու մարտական ոգով գրված օրհներգ-քայլերգի հեղինակը Տիգրան Սազանդարյանն էր՝ նշանավոր երգչուհի Տաթևիկ Սազանդարյանի հայրը¹⁷:

Իբրև պետականություն՝ Ինքնավար Սյունիքն ուներ որոշակի պետական սահմաններ: Պատմաբան և նժողեագետ Ռ. Համբարձումյանի կարծիքով՝ Ինքնավար Սյունիքի պետականության տարածքը Դարալագյազով, Արցախի, Դիզակի (Հադրութի) և Վարանդայի (Մարտունու) շրջանների հետ միասին կազմել է 10 հազար քառ. կմ¹⁸:

Ընդհանուր գծերով ներկայացնելով Ինքնավար Սյունիքի պետական կառուցվածքը՝ դժվար չէ նկատել, որ այն ունեցել է պետականությանը բնորոշ բազում հատկանիշներ, ինստիտուցիոնալ կառույցներ, վերից վար ընտրովի իշխանության մարմիններ և այլն: Պետական իշխանության ձևը եղել է հանրապետական-պառլամենտական կառավարումը, որի շատ գծեր, դժվար չէ նկատել, ընդօրինակվել էին Հայաստանի առաջին հանրապետության պետական համակարգից:

Ինքնավար Սյունիքի պետական իշխանության կառավարման այս համակարգը գործադրվեց ուղիղ երկու ամիս՝ մինչ 1921 թ. ապրիլի 26-ի համազանգեզուրյան 2-րդ համագումարը, որն իր շարունակությունն ու հետագա զարգացումը պետք է ստանար արդեն Լեռնահայաստանի Հանրապետության հռչակումից հետո: Եվ այդ ամենը կատարվում էր Սյունիքի դաժան ձմեռվա և, փաստորեն, պատերազմական դրության պայմաններում:

Սյունիքի ինքնավարության պետական զարգացման հետագա քայլը եղավ Լեռնահայաստանի անկախության հռչակումը:

Մինչ այդ, բուն Հայաստանում դեպքերը զարգացան այնպես, որ 1921 թ. փետրվարի 18-ին տեղի ունեցավ ժողովրդական ապստամբություն՝ ուղղված Հայիեղկոմի բուլշևիկյան վարչակարգի դեմ. տապալվեց խորհրդային իշխանությունը Հայաստանի մեծ մասում, և իշխանությունը ժամանակավորապես անցավ Հայրենիքի փրկության կոմիտեի (ՀՓԿ) ձեռքը՝ Ս. Վրացյանի գլխավորությամբ: Այդ նույն օրերին՝ փետրվարի 16-ին, Նժդեհի հրամանով Սյունիքի արևմտյան ռազմաճակատի զորքերը Յապոնի (Հովհաննես Պարոնյան) գլխավորությամբ սրընթաց մտան Վայոց ձոր, պարտության մատնեցին կարմիր բանակի զորամասերին, և Դարալագյազի ամբողջ գավառը միացվեց Ինքնավար Սյունիքին:

1921 թ. փետրվարի 21-ին մայրաքաղաք Գորիսի Ս. Լուսավորիչ եկեղեցում տեղի ունեցավ Նժդեհի՝ Սպարապետ օժվելու հանդիսավոր արարողությունը: Նրա մեջքին կապվեց օժված գոտին ու նրան հանձնվեց եռագույն դրոշը, որի վրա գրված էր. «Ինքնավար Սյունիքի կառավարությունից անհաղթ Սպարապետ Նժդեհին»¹⁹:

¹⁶ Տե՛ս **Գ. Գրիգորյան, Ս. Հախվերդյան**, Սյունիքի պատմություն, Եր., 2001, էջ 213:

¹⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 214:

¹⁸ Տե՛ս Ռ. Համբարձումյան, նշվ. աշխ., էջ 41:

¹⁹ **Վ. Գևորգյան**, Լեռնահայաստանի հերոսամարտը (1919–1921), Եր., 2010, էջ 130:

Այս կապակցությամբ Ինքնավար Սյունիքի կառավարության բնակչությանն ուղղված փետրվարի 23-ի կոչումն մասնավորապես ասվում էր. «Ձեր Սպարապետը, ինչպես մինչև այսօր, այսուհետև ևս իր հերոսական քաջությամբ կշարունակե փառավոր հաղթություններով ապացուցել աշխարհին, որ հայ ժողովուրդը տոգորված ազատ և անկախ հայրենիք ունենալու տենչով, պատրաստ է զոհաբերել այն ամենը, ինչ հարկավոր կլինի՝ հասնելու ցանկացած նպատակին»²⁰:

1921 թ. ապրիլի 2-ին Փետրվարյան ապստամբության պարտությունից հետո ծանր վիճակ ստեղծվեց նաև Ինքնավար Սյունիքում, որովհետև բոլշևիկների հետապնդումներից խուսափելու համար 10 հազարից ավելի մարդ Արարատյան Հայաստանից գաղթեց Սյունիք՝ նպատակ ունենալով անցնելու Պարսկաստան: Նման պայմաններում Սյունիքի փաստացի ղեկավար Գ. Նժդեհը դիմեց պարսից շահին, Պարսկաստանում գտնվող օտարերկրյա դեսպաններին՝ Սյունիքում հայտնված գաղթականներին տեղ տալու խնդրանքով: Պարսից իշխանությունները անմիջապես պատասխանեցին, որ իրենք պատրաստ են «մատուցելու Ձեզ ամեն մի ծառայություն, ինչ որ վայել է Ձեր անվան մեծությանը»²¹: Դրանով Գ. Նժդեհն ապահովեց շուրջ 10 հազար տարագիրների անցումը Պարսկաստան: Գաղթականների շարքում գտնվող մտավորական Վ. Մինախոյանի տեղեկացմամբ՝ ապրիլի 25-ից մինչև հուլիսի կեսը Արաքս գետն անցել էր 8042 մարդ²²: Սակայն, Խորհրդային Հայաստանի կառավարության ներման մասին ապրիլի 10-ի և համաներման ապրիլի 23-ի հայտնի օրենքների շնորհիվ, Պարսկաստան անցած գաղթականության ճնշող մեծամասնությունը վերադարձավ հայրենիք: Կարելի է որպես հիմք ընդունել պատմաբան Արամ Սիմոնյանի հրապարակած տվյալները, ըստ որոնց՝ 1921 թ. Արաքսն անցած փախստականների 90 տոկոսը հայրենադարձվեց²³:

Ինքնավար Սյունիքի պետականության համար նոր իրադրության պայմաններում, երբ Երևանի անկումից հետո 10 հազար գաղթականների հետ Չանգեզուր էին գաղթել Հայրենիքի փրկության կոմիտեի անդամները, հայդուկներ, մտավորականներ և այլն, Ինքնավար Սյունիքի կառավարությունը պետք է ճշտեր իր հարաբերությունները ՀՓԿ-ի հետ: Հասնելով երկրամաս՝ ապրիլի 21-ին Տաթևում լուծարվեց ՀՓԿ-ն, և Ս. Վրացյանին հանձնարարվեց կազմել Հայաստանի Հանրապետության (<<) կոալիցիոն (խառը) կառավարություն՝ դարձյալ Ս. Վրացյանի գլխավորությամբ: Ընդ որում, ՀՓԿ-ի փոխարեն << անվանվող նույն փոքրակազմ կառավարությունը չէր խառնվելու Սյունիքի ներքին գործերին, այլ խնդիր պետք է ունենար նման բարձրագույն անվանումով Հայաստանը ներկայացնել արտաքին աշխարհին, փաստելով, որ կա << կառավարություն, որը հետամուտ է Հայկական հարցի հայանպաստ լուծմանը: Նույն օրը՝ ապրիլի 21-ին, Վրացյանը հայտնում է Նժդեհին, որ որոշվել է «Հայաստանի բոլոր ռազմական ուժերը և գույքերը հանձնել Սյունիքի կառավարության, այդպիսով, ուրեմն, մեր սպարապետն էլ, ամբողջ հրամանատարությունն էլ ենթարկվում է Սյունյաց սպարապետության»²⁴:

²⁰ Նույն տեղում, էջ 130-131:

²¹ Գ. Գրիգորյան, Ս. Հախվերդյան, նշվ. աշխ., էջ 214, Վ. Գևորգյան, նշվ. աշխ., էջ 140:

²² Տե՛ս Վ. Մինախոյան, Ապրիլի 2-ի գաղթը, «Հայրենիք», Պոսթըն, 1923, թիվ 3, էջ 95:

²³ Տե՛ս Ա. Սիմոնյան, նշվ. աշխ., էջ 6:

²⁴ Վ. Գևորգյան, նշվ. աշխ., էջ 140:

Դրանից մի քանի օր անց, ինչպես արդեն ասվել է, ապրիլի 26-ին Տաթևի պատմական վանքում հրավիրվեց համազանգեզուրյան 2-րդ համագումարը, որի աշխատանքներին մասնակցում էր 64 գյուղից 95 պատգամավոր: Համագումարը ինքնավար Սյունիքը հռչակեց անկախ *Լեռնահայաստան*՝ Գորիս մայրաքաղաքով: «Նման անվանափոխությունը,- գրում է պատմաբան Վլ. Ղազախեցյանը,- կարծես մրցակցում էր «Խորհրդային Հայաստանի» հետ և պետք է անհանդուրժելի լիներ վերջինի դեկավար շրջանների համար»²⁵: Ապրիլի 27-ին կազմվեց Լեռնահայաստանի կառավարություն Սպարապետ Գ. Նժդեհի գլխավորությամբ: Համագումարում միաձայնությամբ ընդունված փաստաթղթում կարդում ենք. «Քանի որ Սյունիքի ամբողջ բախտը և հայ ազգաբնակչության ֆիզիկական գոյությունը վստահած են Նժդեհին, որն իր ամբողջ գործունեությամբ միշտ էլ հանդես է եկել որպես անձնագոհ, տոկուն և նախանձախնդիր դեկավար, ապագա լինելիք կառավարության կազմը ևս վերապահել նրան: Կառավարություն կազմելու համար վարչապետ ընտրել պ. Սպարապետին՝ տալով նրան զորավարի աստիճան և պարզևատրեյով զայն «Խուստուպետան արծիվ» երկաթե շքանշանով»²⁶:

Լեռնահայաստանի կառավարությունը ներկայացնում էին. Գարեգին Նժդեհ՝ նախարարապետ (վարչապետ), արտաքին գործերի և զինվորական նախարար, Ս. Մելիք-Յուլյան՝ ն.գ. նախարար, Հ. Տեր-Հակոբյան՝ պարենավորման, բժ. Մինաս Մինասյան՝ խնամատարության, Ավ. Օհանջանյան՝ հաղորդակցության և փոստ-հեռագրի, Հովհ. Տեճյան՝ արդարադատության և լուսավորության, բժ. Սմբատ Եղիազարյան՝ ֆինանսների, Գ. Տեր-Մինասյան՝ պետական վերահսկիչ նախարար²⁷: Համագումարը, ինչպես և 1-ինի դեպքում, համարվում էր բարձրագույն իշխանություն, իրեն հռչակեց Լեռնահայաստանի *խորհրդարան*: Իսկ համագումարից մի քանի օր անց հրապարակվեց Լեռնահայաստանի կառավարության հայտարարագիրը, որում ուղենշվում էին կառավարության ներքին և արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները²⁸:

Նժդեհի կաբինետն իր գոյությունը պահպանում է մեկ ամիս: Մայիսի վերջին կատարվում է նոր փոփոխություն: Պարսկաստանից Գորիս է վերադառնում Ս. Վրացյանը: Մայիսի 28-ին Լեռնահայաստանի մայրաքաղաք Գորիսում հանդիսավորությամբ նշվում է Հայաստանի անկախության երրորդ տարեդարձը, որից հետո, միավորվելու նպատակով, Ս. Վրացյանի և Գ. Նժդեհի կառավարությունների միջև խորհրդակցություններ են տեղի ունենում: Արդյունքում՝ հունիսի 1-ին կատարվում է երկու կառավարությունների տեխնիկական միացում: Լեռնահայաստանը պաշտոնապես հայտարարվում է *Հայաստան*՝ Գորիս մայրաքաղաքով²⁹: Նորակազմ կառավարությունը կոչվում է Հայաստանի կառավարություն: Նրանում ընդգրկվում է 11 նախարար՝ Ս. Վրացյանի վարչապետությամբ: Այդ նոր կոալիցիոն կառավարությունում զեներալ Գ. Նժդեհը պահպանում է միայն զինվորական նախարարի պաշ-

²⁵ Վ. Ղազախեցյան, նշվ. աշխ., էջ 171:

²⁶ Վ. Ղազախեցյան, նշվ. աշխ., էջ 145:

²⁷ Տե՛ս Գ. Նժդեհ, Երկեր, հ.2, Եր., 2002, էջ 152:

²⁸ Տե՛ս Վ. Ղազախեցյան, նշվ. աշխ., էջ 143-144:

²⁹ Պատմագիտական և հուշագրական գրականության մեջ Լեռնահայաստանի անվանափոխության հարցում չկա միօրինակություն: Հուշագիրների մեծ մասը անվանում է Հայաստանի Հանրապետություն, իսկ մյուս մասը՝ Հայաստան: Կարծում ենք՝ երկու տարբերակն էլ սխալ է, որովհետև երկուսն էլ էությամբ նույնն են, անվանում են Հայաստանը:

տոնը: Նա միաժամանակ բանակի անփոփոխ հրամանատարն էր՝ Սպարապետը, իսկ տեղակալը՝ Կուռոն (Ս. Թարխանյան):

Հարկ է նշել, որ, ի տարբերություն Ինքնավար Սյունիքի ու Լեռնահայաստանի պետության, Սյունիքի հանրությունը անբավականությամբ ընդունեց Ս. Վրացյանի գլխավորած ՀՀ-ը կամ Հայաստանը՝ ուժացած պետական ապարատով, Երևանյան որոշ նախարարների շահատակություններով, այն դեպքում, երբ երկրամասը հայտնվել էր սովի, բարոյական անկման ու քայքայման մեջ: Եվ այս ամենն այն ժամանակ, երբ օրերի հարց էր Ջանգեզուրի միացումը Խորհրդային Հայաստանին:

Ինքնին հասկանալի է, որ Ս. Վրացյանի նախաձեռնած այս նոր փոփոխությունը հետապնդում էր զուտ քաղաքական նպատակներ, «ցույց տալ օտար պետություններին, նաև մեր հարևաններին, թե, ՀՀ-ը դեռ գոյություն ունի իր նախարարական կազմով, թե նա իրավունք ունի հայ ժողովրդի անունից բանակցության մեջ մտնել և այս կամ այն որոշումը կայացնել, ի վերջո նա իրավունք ունի հայ ժողովրդի դատը պաշտպանել»³⁰:

Եվ իրավացի էր Նժդեհը, որ նման անվանափոխությունը համարում էր քաղաքական որևէ արժեքից զուրկ հայեցակետ³¹: Այս կապակցությամբ մենք ևս պաշտպանում ենք պատմաբաններ Ա. Հարությունյանի, Ռ. Համբարձումյանի, Ֆ. Ղազարյանի արտահայտած տեսակետը, որ հունիսի 1-ին «Երևան-ցիների» ճնշմամբ Լեռնահայաստանը հայտարարվեց Հայաստան, ինչը անբավականությամբ են ընդունել Գ. Նժդեհը և Սյունիքի ժողովուրդը³²: Սակայն Գ. Նժդեհը «Երբեք Սյունիքը չի հակադրել Հայաստանի Հանրապետությանը»³³: Հարկ է նշել, որ ինքնավար Սյունիքի և ապա Լեռնահայաստանի պետականության գոյության ողջ ժամանակաշրջանում Խորհրդային Հայաստանի իշխանությունները, նաև 11-րդ բանակի հրամանատարությունը բազմիցս՝ Դրոյի նամակի միջոցով, Գորիսի, Ղալաջուղի, Հերիերի և այլ բանակցություններում փորձել են խաղաղ ձանապարհով, առանց արյունահեղության վերջ տալ հետագա պայքարին և Ջանգեզուրը միավորել մայր Հայաստանին: Եվ միայն այն բանից հետո, երբ Ջանգեզուրը Խորհրդային Հայաստանին միացնելու կայուն երաշխիքներ են տրվում, 1921 թ. հուլիսի կեսերին Գ. Նժդեհը, իրեն բավարարված համարելով, փոքր զորախմբով անցնում է արտասահման (Պարսկաստան)՝ իր հետ տանելով անկախ Լեռնահայաստանի դրոշը:

Հարց է ծագում՝ որքանով էր տեղին ու արդարացված Ինքնավար Սյունիքի և ապա Լեռնահայաստանի պետականության գոյությունը: Դա արդարացված է այն անբեկանելի իրողությամբ, որ Սյունիքն այժմ գտնվում է Հայաստանի կազմում:

Ավելին, Գ. Նժդեհը Լեռնահայաստանի անկախության պահպանման միջոցով փորձում էր խորհրդային կենտրոնական իշխանությունների վրա ճնշում գործադրել Շարուր-Նախիջևանն ու Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանին չմիացնելու նպատակով: Նա Հայաստանի վարչապետ Ս. Վրացյանին ուղղված՝ 1921 թ. հունիսի 26-ի գրությունում զարգացնում էր այն միտքը, որ

³⁰ Գ. Նժդեհ, Երկեր, հ.2, Եր., 2000, էջ 379:

³¹ Տե՛ս նույն տեղը, էջ 379-380:

³² Տե՛ս Ա. Հարությունյան, Գ. Նժդեհի 1921 թ. Թավրիզի դատավարությունը, Եր., 2004, էջ 19, Ռ. Համբարձումյան, նշվ. աշխ., էջ 41: Ֆ. Ղազարյան, Լեռնահայաստանի հերոսամարտը և Գարեգին Նժդեհ, Եր., 2013, էջ 41:

³³ Է. Շարմազանով, Գարեգին Նժդեհը և ռազմական մանկավարժության հիմնահարցերը, Եր., 2006, էջ 24:

քանի դեռ Ինքնավար Լեռնահայաստանը կա, Նախիջևանն ու Շարուրը չեն կարող կցվել Ադրբեջանին, իսկ Հայկական Ղարաբաղը չի ադրբեջանանա³⁴: Սյունիքն իր աշխարհաքաղաքական դիրքով Հայաստանի համար ռազմավարական նշանակություն է ունեցել, քանզի կորցնել Սյունիքը կնշանակեր կորցնել նաև Լեռնային Ղարաբաղը: Սակայն, ցավոք, այն ժամանակ Սոսկվան հայկական բնիկ այդ տարածքների խնդիրը լուծեց Ռուսաստանի քաղաքական, տնտեսական, հեղափոխական շահերի համար ավելի մեծ արժեք ներկայացնող թուրք-թաթարական եղբայրական դաշինքի օգտին:

Գ.Նժդեհի և Սյունիքի ժողովրդի տևական ու համառ պայքարի արդյունքում Ջանգեզուրը միացավ Հայաստանին և դարձավ նրա անկապտելի մասը: «Չլինել Նժդեհի կամքն ու վճռականությունը,- եզրահանգում է պատմաբան Կ. Սարգսյանը,- չլինել անցողիկը մնայունից տարբերելու նրա քաղաքագետի հոտառությունը, Ջանգեզուրն արժանանալու էր Լեռնային Ղարաբաղի ձակատագրին»³⁵: Այս ամենով հանդերձ, մենք համակարծիք ենք պրոֆ. Ա.Սիմոնյանի արտահայտած այն տեսակետին, որ զանգեզուրցիների հետագա դիմադրությունը մայիսի երկրորդ կեսից մինչև հուլիսի առաջին կեսն ընկած ժամանակաշրջանում այլևս արդարացված չէր, որովհետև որևէ կասկած չկար, որ Ջանգեզուրը միացվելու էր Հայաստանին³⁶:

Այդուհանդերձ, Ջանգեզուրի հերոսամարտի հաղթական փորձը լավագույն հաստատումն է նժդեհական այն գաղափարի, որ հողը, ազատությունը և անկախությունը չեն ստանում, նվաճում են: Այս կապակցությամբ չի կարելի չհամաձայնել նժդեհագետ Մ. Լալայանի այն դիտարկմանը, որ եթե չլինել Նժդեհի գլխավորած երկամյա պայքարը, Սյունիքն էլ կարող էր արժանանալ Լեռնային Ղարաբաղի ձակատագրին³⁷: Ինքնիշխան Սյունիքը մի հանգրվան էր՝ պետական մեքենա ստեղծելու միջոցով երկրամասը պահելու, թշնամուն չհանձնելու, հայության անվտանգությունը պաշտպանելու, մինչև որ նպատավոր պայմաններ ու երաշխիքներ կստեղծվեին այն կրկին մայր Հայաստանին միացնելու համար: Այդպես էլ արվեց:

Փաստերը ցույց են տալիս, որ Ինքնավար Սյունիքն ու Լեռնահայաստանը իրենց կարճատև գոյության ընթացքում ավելի ինքնիշխան ու անկախ էին, քան նույնիսկ ՀՍԽՀ-ն, քանզի Սյունիքի անկախությունը պահպանվում էր սեփական զինուժով, մինչդեռ Խորհրդային Հայաստանի անվտանգությունը՝ 11-րդ կարմիր բանակի միջոցով:

Ամփոփելով վերոշարադրյալը և պատմական զուգահեռներ անցկացնելով անցյալի ու ներկայի միջև՝ կարելի է եզրակացնել, որ, ինչպես այն ժամանակ (1920–1921 թթ.), այնպես էլ մեր օրերում գոյություն ունի հայկական երկու պետականություն, համապատասխանաբար՝ Խորհրդային Հայաստան (ՀՍԽՀ) և Ինքնավար Սյունիք–Լեռնահայաստան, իսկ ներկայումս՝ Հայաստանի երրորդ հանրապետություն և ԼՂՀ:

Առաջին դեպքում՝ Ինքնավար Սյունիք–Լեռնահայաստանի պետականության նպատակը երկրամասը թուրք-թաթար-բոլշևիկյան ոտնձգություններից պաշտպանելն ու մայր Հայաստանին միացնելն էր, ինչպես որ ի վերջո

³⁴ Տե՛ս Կ. Գևորգյան, Լեռնահայաստանի հերոսամարտը, Եր., 1991, էջ 169-170:

³⁵ Կ. Սարգսյան, Պատմություն և իրականություն, Եր., 1991, էջ 52:

³⁶ Տե՛ս Ա. Սիմոնյան, նշվ. աշխ., էջ 30:

³⁷ Տե՛ս Մ. Լալայան, Ազգային գաղափարախոսության խնդիրների շուրջ, Եր., 2008, էջ 98:

կատարվեց 1921 թ. հուլիսին, և որի համար մեծապես պարտական ենք Մեծն Գ. Նժդեհի իմաստությանը, կամքին ու սրին:

Երկրորդ դեպքում՝ ներկայիս հայկական երկու անկախ հանրապետություններից ԼՂՀ-ի հիմնահարցի հանգրվանային լուծման վերջնականատակը դարձյալ պետք է լինի նրա վերամիավորումը մայր հայրենիքին՝ Հայաստանի Հանրապետությանը: Այդ մասին մեզ հուշում է Սյունիքի պետականության փորձը:

Այսպիսով՝ ըստ արժանվույն պետք է գնահատել այն պատմաբանների գնահատականը, որ Գ. Նժդեհի զանգեզուրյան գործունեությունը անառարկելիորեն դրվատանքի է արժանի, իսկ նրա հիմնած Սյունիքի պետականության փաստը՝ միանգամայն արդարացված: Այս իմաստով, ներկայումս հայ պատմագրությունը լիովին հաղթահարել է խորհրդային պատմագրության միակողմանիությունն ու բացերը և գիտական ճիշտ դիրքերից է ներկայացնում Հայոց պատմության հերոսական էջերից մեկը՝ Ջանգեզուրի գոյամարտի ու նրա կարճատև պետականության պատմությունը:

АРАРАТ АКОПЯН

*Профессор кафедры „Философии и истории армянского народа” АГЭУ,
доктор исторических наук*

РУЗАННА КАЗАРЯН

*Старший лаборант кафедры
„Философии и истории армянского народа” АГЭУ*

Гарегин Нжде и проблема суверенной государственности Сюника (1920–1921 гг.).- В историографии Советской Армении имеется крайне негативное отношение к Г. Нжде и к созданной им в Сюнике (1920–1921 гг.) суверенной государственности: якобы у Нждеа была цель отделить Зангезур от Армении и превратить его в плацдарм международного империализма для борьбы против советской власти. Между тем, существующие факты и логика последующих его действий показывают, что целью созданной суверенной Сюник-Горноармении была защитить край от турко-татаро-большевистского нашествия и тем самым создать необходимые предпосылки для объединения с матерью Арменией. В результате Зангезур объединился с Советской Арменией, за что мы обязаны Нждеу Великому и героическому народу Сюника.

ARARAT HAKOBYAN

*Professor at the Chair of „Philosophy and Armenian History” at ASUE,
Doctor of Historical Sciences*

RUZANNA GHAZARYAN

*Chief Laboratory Assistant at the Chair of
„Philosophy and Armenian History” at ASUE*

Garegin Njdeh and the Issue of Sunik Statehood (1920–1921).- There is an extremely negative attitude towards Njdeh and the sovereign statehood established by him in Sunik in the Soviet historiography (1920–1921). They thought that Njdeh wanted to separate Zangezur from Armenia and made it a springboard for international imperialism to struggle against the Soviet power. But the aim of the government of Sunik-Lernahayastan was to protect the country from turk-tatar-bolshevik agrations and to guarantee the joining with the Motherland. In result, we owe to Njdeh and the heroic population of Sunik that Zangezur joined Armenia.